Եթէ կայտւն է ամէն մի ձեռադրի տողաքանակը, ասքա նոյնը չի կարելի ամել տողերի մէջ տառաքանակի մասին, քանի որ տառեր կան, որոնք աւելի լայն տեղ են գրաւուամ, եւ այլպիսի տառերի յաճախակի գործածութիւնը մի տողուամ՝ նուագեցնուամ է տառաքանակը տողի մէջ: Բացի դրանից գրչի ձեռքի յողնածութիւնը երբեմն խախտուամ է տառերի միաչափութիւնը:

Տառաքանակը կախուած է նաեւ բառանջատուամից, կէտադրութիւնից, տողադարձից (երբ աւելացւուամ է ը ձայնաւորը) եւ այլ հանդամանցներից: Իսկ երբ համառօտադրութիւն է կիրառուամ դրիչ՝ գաղափար օրինակին համարակ, կամ ընդհակառակը, եւ կամ երբ փոխւուամ է գրատեսակը, խախտուամը արդէն շատանուամ է³⁰:

Զեռադմաններ ամէն մի մասնակից (գրիչը, սրբագրիչը, ծաղկողը, կազմողը եւ այլք) աշխատուած է սրբութեամբ պահպանել դրչութեան կամոնները: Աւարտուած ձեռադրին անցնուամ է զարդիք միջով: Ենթարկւուամ է բնակւան եւ անբնակւան այհասերքների: արտագրուուամ, կարգւուամ է տարրեր մակարդակի մարգիւանց ձեռքով եւ այդպիս համուուամ մեզ: Ուստի ձեռադրի հետ ափէտք է վարուել այնպէս, ինչպէս հնարիչուր՝ հնավայրի, որովհետեւ եթէ դարեր են անցնուուամ հնավայրի վրայով, ապա ձեռադրից ինքն է անցնուամ դարերի միջով, ինքն է շարժւուամ եւ մաշւուամ:

30. Վազ չըջանի ձեռադրուուած պահպանուամ էր ընդօրինակութեան օրինակելի ձեւ, այսինքն ընդօրինակուուամ էր տողը-տողի էջը-էջի, թերթը-թերթի պատճենասորմանը, մեծ մասամբ նաև՝ նոյն գրատեսակով: Այս դրութիւնը թիգրիմացութիւններից զերծ մնալու, ձեռադրից միաժամանակ տարբեր գրիչների ընդօրինակել տալու հնարաւորութիւններ էր տալիս, որով եւ կարճացնուամ էր ձեռադրի գրութեան ժամկէտը: Մեզ հասած հնագրոյն ձեռադրերի մեծ մասը եղու գու գրչի գործ է:

Կորիւնի մեռադիրը շատ չի ընդօրինակուել . առաջին պատճառն այստեղին է, որ երկը ունեցել է Տօնականային տարբերակ, առաջինը լուրենացու հետ միասին՝ կարգուել է ութիւրորդ դարում (որ մեզ է հասել ժԱ. Դարի մեռագրում) և երկրորդ, միայն կորիւնից բանաքաղուած տարբերակը՝ ժԴ. Դարից (Մաշտոյի անուան Մատենադարանի թիւ 3787 և 3797 մեռագրերում): Սրանցից զատ կայ նաև Յայսմաւուրքային տարբերակ, միայն լորենացու հիման վրայ վագմուած (ժԴ. Դարից), որ միշտ լոնթերցում էր վելութեցիներում՝ իշխն յատկացուած օրը և սովորում էին տւուամնասվայրերում: Երկրորդ պատճառն էլ այն է, որ Մենքու Մաշտոյի եւ հայոց գոնիրի գիւտի մասին կարգում էին Մովաչս լորենացու, Ղաղար Փարսկեցու Պատմութիւններում, ինչպէս նաև՝ մասնակիորէն միւս մատենագիրների մօտ:

Կորիւնի երկը մեզ է հասել «Պատմագիրք» կոչուաղ ժողովածուներում, որոնց մէջ պատմիների երկերն են: Բոլոր տարբերակներում կորիւնի բնագրի սոյն հատուածները խախտուած են եղել:

Ինչպէս վերը յիշեցինք, Ն. Ակինեան կորիւնի մօտ խախտումները դիտում է որպէս հետեւանք թղթերի առանձին հատուածների, արտայայտութիւնների ետեւառաջութեան³¹: «Ապա առեալց՝ ճիշտ է տեղադրում. «Անակին տեղը չի պատշաճեր...»³²: «Յայնժամ վաղվաղակի» հատուածը իր շարունակութեան հետ դիտում է որպէս մի ամբողջութիւն (մոռանալով որ քիչ առաջ ամել էր, - «այլուստ մուրած եկած է հոտ») եւ տեղադրում Աղուանից աշխարհ զնալուց յետոյ³³, պատճառաբանելով թէ «Անձանօթ ձեռք մը կ'երեւայ թէ հատուածս հոս գետեղած է, ցոյց տալու համար թէ Մաշտոյը գրի գիւտէն ետքը առաջին գործն ըրաւ այս Մաշտոյ կողմերը» լուսաւորել³⁴:

Ակինեանի կարծիքով, այս հատուածները հիմնախանում եղել են մի թերթի վրայ գրուած բնագիր:

Մենք գոնուամ ենք, որ «Ապա առեալց» եւ «Յայնժամ վաղվաղակի» հատուածներից իւրաքանչիւրը մի առանձին թերթ է եղել կորիւնի Մատենում նախ քան նրանց խախտուելը, այդպէս էլ (այսինքն, որպէս միշտական թերթ) մնացել են խախտումից յետոյ: Այս հատուածները տպագրում ունեն հաւասարաշափ բնագիր, տողերի, տառերի հաւասար քամակով: Սոյն բնագրերը ծեռագրում գրուած են եղել միմի թերթի երկու էջերում, հաւասար տողաքանակով: Այս

31. ԿՈՐԻՒՆ, Վարք Մ. Մաշտոյի, 1957, հ9-ի2:

32. Նոյն տեղում:

33. Նոյն տեղում, էջ 33:

34. Նոյն տեղում, էջ հ7-ի6:

առաջին հաստատում հիմքն է . երկու կայուն թերթ՝ իրենց պարունակութեամբ :

Երկրորդ հիմքն այն է , որ այս թերթերը եղել են իրար կից թերթեր , առել է պրակի մի ժուղթ՝ երկու թերթով : Եւ ահա թէ ինչու : Ամէն մի պրակ ունի առաջին թուղթ , որ դրւում է բոլորից առաջ կամ բոլորից ներքեւ , եւ նրա վրայ դրւում են յաջորդ թըրթը՝ 2, 3, 4 , եւ այլն , եւ մի անդամ ծալուելով՝ ստեղծում պրակի : Պրակի առաջին կամ ամենատարակի թղթի առաջին թերթը դառնուամ է տուեալ պրակին առաջին թերթը , իսկ երկրորդը՝ վերջին : Իրար վըրայ դարսուած թղթերից վերջինը՝ պրակի մէջտեղն է : Այս մէջտեղի թղթի երկու թերթերի վրայ գրուած բնադրիրը միայար շարունակութիւն է կարմուամ , այսինքն մէջտեղի թղթի չորս էների վրայ դրուած բնադրիրը յաջորդաբար իրար շարունակութիւն է : Միւս թղթերինը այլպէս չեն . ինչքան մէջտեղից գիտում էք դէպի առաջին թուղթը , այնքան թղթերի երկու թերթերի վրայ գրուած բնադրերի յարջորդական կապուած-ութիւնը իրարից հեռանուամ է , այսինքն առաջին թերթի դէպերի անմէջական շարունակութիւնը ընկնուամ է ոչ թէ իրեն կից երկրորդ թերթուամ այլ նրանց միջեւ տեղաւորուած թերթուամ :

Քննութեան առարկայ թղթի զոյտ թերթերի բնադրերը իրար անմէջական շարունակութիւն չեն կազմուամ , չունեն դէպերի պատմութեան տրամաբանական կապ : Ուստի այն պրակի մէջտեղի (կամ վերջին) թուղթը չէ , ընդհակառական , նրանց բնադրերը իրարից շատ հեռու են ընկած , եւ ամենայն հաւանականութեամբ այլ պրակի առաջին թուղթը պիտօք է լինի , ինչպէս երեսուամ է նրանց միջեւ տեղաւորուած բնադրից , որ կարող է զբարեցնել մի քանի թուղթ : Սովորաբար պրակի թղթերից չփողուելու , խախտուելու , փորչելու աւելի շատ հակուածութիւն ունեն առաջին եւ վերջին , այսինքն երկու ծայրերի թղթերը : Եւ քանի որ յեշեալ թուղթը մէջտեղինը չէ , մնում է հաւատալ որ այն պրակի առաջին թուղթն է : Եթէ մեր այս ենթադրութիւնը յաջորդութիւն տերի , կը նշանակի ճիշտ է մեր ենթադրութեամբ որդեգրած քննութեան եղանակը :

Մենք , արդէն բնադրի քննութեամբ տեսանք , որ այս թուղթը իր տեղուամ չէ , նշանակուամ է այն իր հայեաւան՝ նախորդ կամ յաջորդ պրակի առաջին թուղթն է , որ թիւրիմացաբար , կազմելու ժամանակ դրուել եւ կարուել է այս պրակի հետ , որի մասն է կազմել ու ընդորինակուել յետագայում , օրինականացնելով թիւրիմացութիւնը :

Ամէն դէպուամ մենք ունենք մի պրակի առաջին թուղթը , որ միաժամանակ պրակի առաջին եւ վերջին թերթերն են : Այս էլ երրորդ հիմքն է . այսինքն՝ «Ապա առնեալ»ը պրակի առաջին թերթն է . «Յայնժամ վաղվաղակի»ն վերջին թերթը :

Այս երկու թերթերի տողերի ու տառերի քանակը խմանալով, մեզ յայտնի կը դառնայ ձեռագրի իւրաքանչիւր թղթի տողերի ու տառերի քանակը: Այս չորրորդ հիմքն է: Այս խմանալուց յետոյ, կը հաշուենք երկու թերթերի (հատուածների) եւ նրանց միջեւ տեղաւորուած բնադրի տողերի ու տառերի քանակը, կը բաժանենք առաջին թղթի տողերի ու տառերի վրայ եւ կը ստանանք թղթերի ու թերթերի այն քանակը, որից կազմւուամ է սոյն պրակը: Այդպէս կը վարուենք նաեւ նրանից առաջ եւ նրանից յետոյ ընկած պրակների հետ: Այս բոլորի արդիւնքը կը լինի այն, որ մենք կ'ունենանք առաջին խախտուած ձեռագրի նմանակը, որից յետոյ՝ հեղինակային բնադրին համեստուած մի քայլ է մնուամ: Բանն այն է, որ պրակները կարգաւորելուց յետոյ ակնյայտ կը դառնան խախտուած պրակները, եւ նրանց կարգաւորութիւնն արդէն տեխնիկայի դործ է, չփոթուած թուղթը կը տեղադրուի իր տոհմիկ տեղը եւ մենք կ'ունենանք կորիւնի Վարք Մաշտոցի երկի հեղինակային օրինակի առաջին ընդօրուինակութեան մանրակերտը:

Մեր աշխատանքի համար հիմք ենք ընդունուամ Կորիւնի Վարք Մաշտոցի երկու հրատարակութիւն: Առաջինը Գ. Ֆնարդիանի 1930 թ. Երուսաղէմուամ կատարած հրատարակութիւնն է: Այն նախատակայարմար է նրանով, որ հրատարակուած է միահար շարահարութեամբ, առանց հատուածուամների: Այստեղ տողահամարների հերթականութիւնը նշուած է 5ով աճող թուարկումով՝ 5, 10, 15, 20 եւ այլն: Հրատարակութիւնն ունի 1-953 տող: Երկրորդը՝ Մ. Աբերեանի 1941 թ. Երեւանուամ հրատարակած «Վարք Մաշտոցի» բնագիրն է, որն ունի Ա-իթ հատուածուամները, եւ ամէն մի էջ իր տողահամարը, դարձեալ նոր աճող թուարկումով:

Երուսաղէմի հրատարակութեան մէջ խնդրոյ առարկայ թղթի առաջին թերթի վրայ գրուած «Ապա առեալ» հատուածը զբաղեցնուամ է հերթական 270-276 տողերը. ընդունմէնը 7 տող (287 տառ), երկրորդ թերթի վրայ գրուած «Յայնժամ վաղվաղակի» հատուածը՝ 258-275 տողերը, ընդամէնը 7 տող (290 տառ):

Ուրեմն այդ թղթի պարունակած բնագիրը տպադրուամ ամփոփ-ւում է 14 տողուամ, ուրեմն թուղթն ունի 14 տող:

Այս ցոյց է տալիս, որ Կորիւնի Մատեանի նախադադարակարը մուել է մօտաւորապէս 14-15 տառանոց 10ական տող պրաբունակուց միասիւն դրադաշտով ձեռադիրը, որի մեծութիւնն արդէն կախուած է գրերի, միջտողային հեռաւորութեան եւ լուսանցքների չափսերից:

270րդ տողից մինչեւ 367 տողը, այսինքն «Ապա առեալ»ից մինչեւ «Յայնժամ վաղվաղակի» հատուածի վերջը 98 տող է: Սրանից հանուամ ենք տպադրի կիսատ տողերի անդրել մասը՝ 2 տողի չափով,

մնում է 96 տող, բաժանում ենք 7ի (իւրաքանչիւր թերթի տողաքանակի) վրայ, ստանում 14 թերթ կամ 7 թուղթ:

Ուրեմն 270-367 տողերը տեղաւորուած են 14 թերթանոց կամ 7 թղթանոց ձեռագրական պրակի մէջ: Այսպիսով մեզ հետաքրքրող թղթի սոյն պրակն տանի 14 թերթ, որի առաջին եւ վերջին թերթերը «Ապա առեալ» եւ «Յայնժամ վարլաղակի» հատուածներն են պարունակում:

367 տողով վերջացրդ պրակից յետոյ յաջորդ պրակն ակսում է 368 տողով եւ աւարտում 453 տողով: Այստեղ վերջանում է այն հատուածը, որից յետոյ պատշաճում է «Յայնժամ վարլաղակի»: Այն պարունակում է 76 տող, հանած կիսատ տողերի 3 տողաչափ անդրել մասը՝ կ'ունենանք 73 տող: $73 : 7 = 10$, 3 եւ 3 տող: Ուրեմն 14 թերթանոց պրակի յաջորդ պրակը 10 թերթանոց կամ 5 թղթանոց է: Մեր միջին թուարանականից նախորդ՝ 14 թերթանոց պրակում երկու տող պակաս տանեցնք, այսուել՝ 10 թերթանոցում՝ 3 տող ասելի: Այս թոյլատրերի է, քանի որ անյայս են գրատեսակը, դրութեան ժամանակը, համառոտադրութեան մատիարդակը, չգիտենք նաեւ, թէ ասելի լայն տեղ գրաւող տառերը՝ ինչպէս ա, գ, դ, թ, խ, զ, մ, ն, պ, ջ, ռ, վ, տ, ու, փ մի տողում կամ մի էջում՝ ինչ յաճախականութեամբ են հանդիպել, ինչպիսին է եղել բառանջատման, բացատնեցի, կիտադրութեան նշաններ նշանակերու կարգը եւ այլն, որոնք անպատճառ տալիս են մէկից մի քանի տառերի տարբերութիւն՝ տողում, ապա՝ էջում, թղթում, պրակում եւ ստացում է յարաբերական անկայունութիւն:

Այս երկու պրակների 4 թերթի տարբերութիւնը անթոյլատրելի է: Հնարաւոր ենթադրութիւնը այն է, որ 10 թերթանոցի երկու թերթը թիւրիմացաբար միացուել է նախորդին եւ իւրաքանչիւր պրակ կազմուած է երել 12 թերթից կամ 6 թղթից: Այդ անթադրութիւնը իրական հիմք կը դառնայ, եթէ հաստատենք, որ ձեռադրի բոլոր պրակները ունեցել են 12 թերթ կամ 6 թուղթ: Այս կը դառնայ մէր հինգերորդ հիմքը, ուստի նախ հաշուենք բնագրի սեղմուից մինչեւ «Ապա առեալ» հատուածի տողաքանակը, որ, ինչպէս տեսանք, հերթական պրակի սկզբնի է:

Մաշտոցի վարքի սկզբնից մինչեւ նշուած պրակի սկզբնը 269 տող է: Հանում ենք տպագրութեան էջերի կիսատ տողերի անդրել մասերը, (13 տող), ստանում 256: Բաժանում ենք 7 տողի վրայ՝ 36 թերթ եւ 4 տող, որ 12 թերթանոց երեք պրակ է, կամ 18 թուղթ եւ 4 տող: 18 թուղթը 6 թերթանոց երեք պրակ է: Այսպիսով՝ Վարքի սկզբնից մինչեւ «Ապա առեալ» հատուածը երեք պրակ է: Համարակալենք պրակները.

Ա-12, Բ-12, Գ-12: Յաջորդ պրակները բնականաբար պէտք է կրեն Դ եւ Ե նէշերը, որոնց թերթաքանակները տարրեց են՝ Դ-14, Ե-10: Շարահարենք. Ա-12, Բ-12, Գ-12, Դ-14, Ե-10:

Ե պրակի վերջից 454 տողից սկսուող բնագիրը մինչեւ գրքի աւարտն ունի $953 - 454 = 500$ տող: Սրանից հանենք կիսատ տողերի չդրած մասը՝ $500 - 18 = 482$, բաժանենք 7 տողի վրայ, կը ստանանք 68,5 թերթ: Սա էլ բաժանենք 12 թերթի վրայ, կը ստանանք 5 պրակ և վերջին՝ 8 թերթանոց մի պրակ: Հերթական համարով նշանակնենք նախորդ եւ այս հինգ պրակները:

Ա-12, Բ-12, Գ-12, Դ-14, Ե-10, Զ-12, Լ-12, Թ-12, Ժ-12, Ճ-12, Ժ-12-8: Վերջին պրակի թերթերի քանակը կախուած է նախորդ ամբողջական պրակներից դուրս մնացած բնագրի ծաւալից: Այսուել 8 թերթում աւարտուած է Կորիւնի երկը, ուստի պրակը պէտք է լինի 8 թերթանոց կանոնաւոր պրակ: Անկանոնը Դ եւ Ե պրակներն են:

Նոյն հաշուաները կատարենք Մ. Աբերեանի պատրաստած բնադրի վրայ: Մեզ հետաքրքրող թերթերն ունեն նական տող, այսինքն՝ թուղթն ունի 12 տող, որովհետեւ գրքի սպազդութիւնը մակրատառ (պիտու) է: Այդ թերթերի մէջ ամփոփուած պրակն ունի 87 տող, որ բաժանենք 6ի վրայ՝ կը ստանանք 14 թերթ (3 տող աւելի): Սոյն պրակից յետոյ սկսուող պրակի պարունակութիւնը, որ համում է մինչեւ ժդ հատուածի վերջը՝ 62 տող է, որ բաժանենք 6ի, կը ստանանք 10 թերթ (եւ երկու տող):

Բնագիրը սկրիպտ մինչեւ խախտուած պրակը, այսինքն «Ապա սոեաշով սկսուող պրակը պարունակուած է 212 տող, որ բաժանում ենք 6ի, ստանում ենք մօս 36 թերթ: Քանի որ դիտենք պրակի թերթի քանակը, 36 թերթը բաժանենք 12ի, կը ստանանք 3 պրակ: Այս պիտու ունենք Ա-12, Բ-12, Գ-12 թերթանոց երեք պրակ եւ Դ-14, Ե-10 թերթանոց մէկական պրակ:

Ե-10 թերթանոց պրակից յետոյ բնագրի տողերը մինչեւ վերջ 409 է, բաժանեցինք 6ի՝ $= 68$ թերթ, բաժանած 12 = 5,8 պրակ: Այսինքն Զ-12, Լ-12, Թ-12, Ժ-12, Ճ-12, Ժ-12-8: Ե'ւ ֆնտղեանի Ե'ւ Աբերեանի պատրաստած բնագրերում մենք ունենք լիակատար համընկնում: Կորիւնի Վաղք Մաշտոցի պատմութիւնան նախագաղաքարը 12 թերթից կազմուած տասնմէկ պրականոց ձեռագիր է եղել, որի պրակներից երկուաը խախտուած են: Այսպէս:

Ա-12, Բ-12, Գ-12, Դ-14, Ե-10, Զ-12, Լ-12, Թ-12, Ժ-12, Ճ-12, Ժ-12-8:

Վերջին պրակի թերատութիւնը, տրամաբանական է, քանի որ բնագիրը այդտեղ վերջացել է: Անորամաբանական է Դ-14 եւ Ե-10 պրակների ամենաւասարութիւնը: Այսուեղի թիւրիմացութիւնը նոյն պէտք արտամաբանական է: Պարզաբն Ե-10 պրակի թերթերից մէկը


թիւրիմացարար միացուել է Դ պրակին: Անջատում ենք այդ թերթը, որ միացել է Դ-ին սկզբից, որովհետեւ, լնչակս տեսանք այդ թղթի գորդ թերթերի բնագրերը փրար շարունակութիւն չեն կազմում, այլ միմեանցից բաւական հեռու են (եւ որ չփոթուելու եւ խախոտուելու հնարաւորութիւն առաջին եւ վերջին թղթերն ունեն) եւ միացնում ենք Ե պրակին՝ սկզբից, վերը նշուած պատճառարանութեամբ, եւ Դ ու Ե պրակիները նոյնպիս դառնուած են 12արան թերթերով պրակիներ:

Զեռագրերում թերթերի կամ թղթերի, նոյնիսկ պրակիների շփոթյաճախ է պատահում, որ մեծաւ մասամբ կապւում է կարմարարութեան հետ: Մատենագրաբանի թիւ 2679 ճեռագիրը, դրուած 981 թ. յայտնի հնագոյն թղթեայ ճեռագիր ժողովածու է: 1585 թ. Սիմեոն Ապարանցի բարունապետը քայքայուած ճեռագիրը կարդաւորում է, դաշուասում է ըստ պրակիների, նշանակում է պրականչերը եւ յանձնում կազմարարին: Որովհետեւ բոլոր թերթերը ոչ թէ փրար կից, այլ թիկնամասերը քայքայուելու պատճառով առանձին-առանձին էին, կազմարարը նախ ամէն մի պրակ՝ բոլորակարով պէտք է փրար կարէր-միացնէր, ապա՝ պրակիները իրար հետ կազմէր: Այդպէս էլ անում եւ վերագրարձնում է բարունապետին:

Կազմարարը ոչ միայն թերթեր, այլ եւ պրակիներ էր խառնել: Սիմեոն Ապարանցին սկսում է լուսանցքներում նշել խառնուած տեղերը: «Ո՛վ եղբայր, Ժ թղթով առաջ գնա եւ գտանես» (39թ): «Ո՛վ եղբայր, գարձիր Ղօ համար» (40ա, նիւթերի համարը նկատի ունի): «Ո՛վ եղբայր, ԽԱ. թղթով յետ դարձիր, գտանես» (50թ), «Ո՛վ եղբայր, զսորայ պակասն ՃԼ համարն տես» (61ա) եւ այլն: Ճարահատեալ բարունապետը 273թ էջում յուսադրում է. «Տասը թղթով յառաջ գնա, մինչ որ զգիրքը քակել տամ, որ յիւր շարն ընկնի»³⁵: Այդպէս էլ Ապարանցուն չյաջողուեց ճեռագիրը «յիւր շարն» գցել: Այդ ճեռագիրն ընդօրինակողները արտադրում էին լուսանցքների ցուցումների համապատասխան եւ խուսափում թիւրիմացութիւնից:

Հաղատի Աւետարանի կարմողը ոչ միան պրակիներից նրկուսն է ետեւառաջ կագմել, այլ եւ յիշատակարանի երկու թղթերը: Գըլ-խաւոր յիշատակարանի կից թերթերի մէջտեղուամ տեղադրել է յետաղայ ստացողի կից թերթերի վրայ զրուած յիշատակարանը եւ կազմել, հաշուի չի առել նոյնիսկ յիշատակարանների գրերի տար-

35. Մատենագրաբան, ճեռ. թիւ 2679: Զեռագիրը հրատարակւում է լուսատիպ նմանանութեամբ եւ նմանաստպութեամբ, «Մատենա գիտութեան եւ հաւասոյ Դաւթի քահանայիք» խորագրով: Նմանահանութիւնը կարդաւորուած է ըստ ցուցումների, որից էլ վերականգնուած է նմանաստպութիւնը: Կից թերուած է հին եւ նոյն թերթակալումների համեմատական տախտակ:



բերութիւնը : Այժմ գլխաւոր յիշատակարանը տեղաւորուած է 357ա-357թ և 360ա-360թ էջերում, իսկ յետապայ տացողին՝ 358ա-358թ և 359ա-359թ էջերում³⁶ :

Սրանք բացատրւում են կազմարարի՝ բնադրին անծանօթութեամբ³⁷ :

Նոյն կարծիքին ենք նաև Կորիչնի Մատեանի կադմարարի մասին : Թիւրիմացարար շփոթուածի վկայութիւն է նաև պրակների հարեւանութիւնը : Կաղմողը ե պրակի առաջին թուղթը ե-ի փոխարէն Դին Դի-ի վրայ է դրել : Իսկ յետոյ սիալը նկատելու առիթ չլ տուել նախորդ թերթի եւ նախորդ պրակի վերջին թղթի եւ նոր գրուած թղթի բովանդակութեան թուացող բնականութիւնը, այնտէս որ այդ սխալադրութիւնից յետոյ գարերի ընթացքում մատեանն ընդօրինակուում ոչ մի դրէն, իսկ մեր ժամանակներուամ Կորիւնով զբաղուող ոչ մի բանակը չի կասկածել, բացառութեամբ Ն. Ակինեանի :

36. Մատեանագարան, ձեռ. թիւ 6288:

37. Սակայն այդ կարգի զէպքեր միայն կազմարաբների մեղող չմն պատահում : Այս մի օրինակ, Տասնմէկի կերպ գարում արտապրուած Զմմառի թիւ 204 ձեռագիր ժողովածուի սկզբուն տեղաւորուած Անանիա Շիրակացու Աշխարհագրութեան 16ր էջի 6-9 տողերն ունեն այսպիսի տեսք :

Եւ Քայ զիրոյն հարաւոյ: Եւ Յարեթ զիրոյն արքամտից եւ գհիւսիսոյ: Ցոլով երկիրն ի հիւսիսափն կողմանն Շի և Երբիսկից: (Օդուակութեամբ մնք քսերուածէնը) :

Բնադրի ընդգծուած տողերը Անանիա Շիրակացու «Յաղագ աշխարհագրութեան ստորյ» Երկիր են: Այստեղ սկզբից բացակայում է 14 ու կէս տող («Յաղագ աշխարհագրութեանց յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալոց» մինչեւ «... բայց փոքր արջն զեր ի վերոյ գոլով...» (այստեղ՝ «յոլով...») (Մատեանագարան, ձեռ. թիւ 582, էջ 165ա-183թ): Հմմատ. ԱնԱնին ՇիրԱկԱթի, Մատեանագրութիւն, 1944 էջ 366-367): Իսկ վերեւի ընդգծուած տողերը Շիրակացու Աշխարհագրութեան սկզբում տեղաւորուած եւ նրա մաս կազմող Հիւսպութեան Բուտրացու «Ծննդոց գրեթի» Ազգաւամարք Երկիր որդուցն Նոյի հաստուածի վերին է: (Ա. ՄԱԹԵՎԻՌԱՅԵԼՆ, Անանիա Շիրակացու «Աշխարհագրութեան» հետ կապուած մի քանի հարցեր, «Լրաբեր» (հաս. դիսու.), Երեւան, 1979, թիւ 9, էջ 78-86):

Զմմառի ձեռագրում պակասուում է մէկ թերթ, որ կարող էր պատահել արտագրելիս միանալամից Երկու թերթ չուռ տալու կամ մի ամրող թերթ ընկած լինելու հետեւանքով, երբ զրիչը չի զգացել բնադրի պակասութիւնը: Բանն այն է, որ արտագրուուղ էջի վերջին բառով աւարտուած է եւ նախադասութիւնը եւ էջը, իսկ ուսուուղ էջի առաջին բառերը կասկած չեն յարուցում, թւում են շարունակութիւն նախորդ նախագաստութեան:

Այսպիսի զէպքեր գրչութեան մէջ մինում են, չնայած գրիչների արտակարգ զդուութեան եւ ուղարկութեան, քանի որ նրանք կապուած են մարդու աչքի, ձեռքի, մտքի յոշինացութեան, հոգեկան վիճակի, պատահականութիւնների եւ ձեռքի, մտքի յոշինացութեան, հոգեկան վիճակի, պատահականութիւնների հետ այլ հանդամանքների հետ: Այս Երեւոյթները, սակայն, դժբախտութիւն են զանանում, երբ տեղի են ունենաւում հեղինակային միակ օրինակի հետ, ինչպէս կատարուել է Կորիւնի ոսկեզնիկ մատեանի:

Բանն այն է, որ Գ պրակի վերջին թիրթն աւարտուում է «Իսկ արքային հանդերձ միաբան սրբութեան Սահակաւ եւ Մաշտոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն, ուրախ լինէին» նախադասութեամբ: Իսկ շփոթած թուղթն ակառուած է նոյն մարդկանց յիշատակութեամբ: «Ապա առեալ երանելի հոգաբարձուացն...» նոյն սրբերն են Սահակ եւ Մաշտոց, եւ նշանագրեր...:

Այս հանդամանքը բացառել է ամէն տեսակի կասկած, եւ նրանք յետագայ շարադրանքի վրայ էլ չեն կասկածել եւ աշխատել են պատճառաբանել:

Թթվի վերատեղադրուումից յետոյ Կորինեան շարադրութիւններն այսպիսի տեսք ունեն (փակագծերուում Մ. Աքեղեանի հրատարակութեան էջերն են):

(92) Գ պրակ

(12ա) Որ էր մերձաւոր Դանիէլի ասորոյ եպիսկոպոսի:

Իսկ Հարելին զայն լուսեալ, փութանակի հասանէք առ Դանիէլն եւ նախ ինքն տեղիկանայր ի Դանիէլէ նշանագրացն, եւ արփա առեալ ի նմանէ առաքէք առ արքա(12բ)յն յերկիրն Հայոց: Ի հինգերորդի ամի թարաւորութեան նորա ի նա հասուցանէք: Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ եւ Մաշտոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հարելէն, ուրախ լինէին:

Դ պրակ

(1ա) Իսկ իրրեւ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղորայս դիմասր հայերէն լեզոյն, մանաւանդ դի եւ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք եւ յարուցեալք դիմացան, (1բ) յժա այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, եւ նմին ելս ինորէին ժամանակս ինչ: Վասն որոյ առեալ երանելոյն Մաշտոցի դաս մի մանկոյ հրամանակս ինչ: Վասն որոյ առեալ բանութեամբ սր (94)

(102) Դ պրակ

(12ա) Քաղաքն, աղդ լինէր թաղաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարածունն աւարդանառոյն ամբոխ, ի քաղաքէն եթեալ՝ պատահէին երանելոյն զափամբ Ռահ գետոյն: Եւ զցանկարի (12բ) ողջոյնն միմեանց տոսեալ, ուստի եւ բարբառաւք յնձութեան եւ երգաւաք հոգեւորաւք, եւ բարձրադոյն աւրհնութեամբք ի քաղաքն դառնային, եւ զաւուրս տաւնական ուրախութեամբ անցուցանէին:

(92) Ե պրակ

(1ա) Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարձագիւտ խնդրելին, հայտէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով դիմանա-

գիրսն արծարծել մարդասցեն։ Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեանային, ապա հր(1ր)աման տայըր ամենայն ուղիք նովին կրթել, որով եւ յաստիճան իսկ վարդապետութեան դեղեցիկ՝ երանելին հասանէր, եւ իրբեւ ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, եւ նովին նշանադրովք տանէր։ (102, 2ա) Եւ այնպէս միջամուկի եղեալ հանդամանեաւք աւրինապատգամացն մինչեւ բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն զերծանել։ Եւ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ զամբ

(108) Ե պրակ

(11ա) [Եւ անդ] ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ դվարդապետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ, իի առնէր գգաւառն ողջունիւ Աւետարանին Քրիստոսի, եւ կարգէր յամենայն դիւրոս (11ը) գաւառին դասս որբոց վանականաց։ Որում եւ հասեալ ժամանեալ հայրաբարուին գտայ, որդւոյ Շաբաթայ, առն քրիստոսամիրի բազում սպասաւորութիւն իրբեւ հաւատարի որդւոյ վարդապետին տանէր։

(102, 12ա) Յայնժամ վաղվարակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զիստավորութ կողմանան Մարաց, որք ոչ միայն վասն դիւամին սաստանայակիր բարուցն ճիւաղութեան, այլ եւ վասն ինցըբեկադոյն եւ (12ը) խոշորագոյն ինցուին՝ դժուարամատոյցք էին։ Առ ի յարդարել եւ զնոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարդախաւս, հռեսորաբանս, կրթեալս, աստուածատուր իւմաստութեանն ծանօթ։

(108) Զ պրակ

(1ա) Ապա յետ այնորին ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր։ Եւ անդ աստուածասէր հնազանդութեամբ ընկարեալ գնահանին Սիւնեաց, որ էր Վաղինակ։

Այսպիսով, ձեռադրագիտական, հնագրագիտական քննութեան մեր ընտրած եղանակը հասուատեց պրակարթթի մասին մեր ենթադրութիւնը, եւ վերականգնելով պրակը³⁸, մենք հասանք այն ցան-

38. Նոյն եղանակով փորձեցինք որոշել Խորենացու Պատմութեան վերը բերուած պատրիկի պրակիւմ զրադեցրած տեղը (Մատենադարան, պատառիկ թիւ 1411)։ Բանն առն է, որ 20×29 եւ 20×25 սմ. մեծութեան մադաշախեայ զոյդ պատուրիները սուանձնին-սուանձնին եղել են ձեռադրի մեզրից եւ վերջի պահանակներ։ Անջատուել են ձեռադրից վերջերս եւ մեծութել պաստրիների հաւաքածու։ Որոշ ժամանակ անց, նրանք մասցուել են իրար որպէս կից թերթեր։ Վէտք էր սուտուգել, թէ իրաք նրանք իրար կից թերթեր են, եւ պրակի ո՞ր թերթերն են։

22 սողանոց երկսիմ գրութիւն ունի էջը։ Առաջին թերթը զրադեցում է սողագը (1981 թ.) 402 էջի 28 սողերը։ Երկրորդ թերթը 414 էջի 29 սողերը։

կալի արդիւնքին, որ մինչ այդ հաստատել էինք նաև պատմաբանաւորական քննութեամբ։ Համագնուութիւնը միմեանց լրացնելով, արդարացրեց Կորիւնի Մատեանի Եպօսկի առաջին թղթի վերաբերեալ մեր կասկածների իրաւացիութիւնը եւ վերատեղադրման ճշմարտացիութիւնը, որով վերացւում է դարաւոր թիւրիմացութիւնը, իր ծընած հետեւանքներով։

Ինչ է տալիս հայագիտութեանը, մասնաւորապէս՝ մեսրոպագիտութիւնը Կորիւնի «Վարք Մաշտոցի» երկի սոյն թիւրիմացութեան վերացումը, խախուած թղթի բաւն տեղում վերահաստատումը։

Վերականգնուում է Մեսրոպ Մաշտոցին եւ հայոց գրերին նույիրուած Կորիւնի պատմութեան հեղինակային շարադրանքը երեք հատուածներում։

Առաջին դրուագում վերացւում է հայոց գրերի գիւտի ստեղծման ձանապարհին հանդիպած Դանիէլեան գրերի մասին պատմութեան երկու հատուածների միջեւ պատահականորդէն ստեղծուած զօրեղ խոչընդուած հատուածը։ Դարեր շարունակ անկասկածելի թուալով, հատուածը խախուել էր Կորիւնի Ուկեննիկ Մատեանի պատմական տրամաբանութիւնը եւ պատճառ դարձել Դանիէլեան գրերին ոչնչով չէիմնաւորած զօրութիւն հաղորդելուն, նրան վերագրուել յաւերժական դոյլութեան միսիա։ Մեսրոպ Մաշտոցի սեփական գիւտի՝ հայոց գրերի ստեղծման հնագրական հիմք է համարուել եւ մեսրոպեան 36 գրերից՝ 29ի արարիչ, իսկական արարիչին թողնելով միայն 7 ձայնաւորներով լրացնելու «պատիւը»։

Շուրջ հազար հինգ հարիւր տարի պղտորուել են Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գիւտի յստակ, ազգային ակունքները, եւ որոշ ուսումնասիրողների աշխատութիւններուում Մեսրոպի հետ կիսել հայոց գրի եւ դպրութեան սկզբանաւորման մեծագործութեան դափնիները։ Դանիէլի նշանագրերով սկիզբ են դնուում հայ դպրութեան։ Աւելին, որոշ ուսումնասիրութիւններուում Դանիէլեան գրերը համարուել են հայոց հին գրեր եւ դարձել նախամաշտոցեան գիր ու գրականութիւն ունենալու տեսութեան ամուրը յենարան։ Իսկ ըստ վերականգնած բնագրի, որտեղ վերջանուում է Դանիէլեան գրերի մասին Կորիւնի պատմութիւնը, այնտեղ էլ վերջանուում է Դանիէլեան գրերի կեանքը։

Միջին հաշուած՝ պատառեկի 1 թերթը տպագրուում զրագեցնուում է 28 տող։ Այս երկու էջերի միջեւ ընկած թերթերն ունեն 188 տող։ Ան բաժանում ենք 28ի եւ ստանուած 6։ Ուրեմն Մատենադարանի թիւ 1411 պատառիկը Խորենացու Պատմութեան պրականերից մէկի 4րդ թուղթն է, որի մէջ տեղաւորուած են նաև 3 թուղթ կամ 6 թերթ։ Եթէ ձեռագիրը 12 թերթանոց է, նշանակում է մեր պատառիկը այդ պրակի երրորդ թուղթն է, որից յետոյ եւս երեք թուղթ է եղել։ Վերջապէս նշանակում է, որ այս երկու թերթերը եղել են իրար թղթեր։

Ուստի դբանից յետոյ, Հայոց մեծերի «լարձեալ երկրորդ անդամ նոյն հոգսի մէջ ընկնելը», Հայոց գրերի մասին հոգալը, կրկին անդամ նշանակուած է, որ լրիւ մերժել, ձեռ են քաշել դանիէլեան զրերից, եւ ուրիշ ելք են մտածում: Այս դէպքերը, գրերի թերելը, փորձարկելը, մերժելը եւ Մեսրոպին՝ աշակերտներին հետ Միջառդետուարի է ուղարկելը տեղի է ունենում Վոամշապուհ թագաւորի հինգերորդ տարում, գրում է Կորիւնը:

Դանիէլեան գրերի առասպելից ադասուելով, Հայոց գրի արար-չագործութիւնը մտում է նրա արարչն՝ Մեսրոպ Մաշտոցին:

Մաշտոցեան գրերը ազատուեցին իրենց վլին հարկադրաբար փաթաթուող բազմաթիւ նախատիպերից մէկից, որի բախտին են արժանանում նաեւ միւս բոլոր մեծ ու փոքր, ամբողջական ու մասնակի նախատիպերը, երբ մենք ուշադիր կարդում ենք Կորիւնին եւ մանրամասն քննում մեսրոպաստեղծ գրերի հնագոյն նմոյշները: Խօսքը վերաբերում է Հայոց գրերի ստեղծման հանդամանքների մասին Կորիւնի բացարձակ յստակ վկայութեանը, որը բացառում է օտար այրուեններից գիր վերցնելու հնարաւորութիւնը: Դժբախտաբար սոյն հարցով զբաղուողների մեծ մասը պնդում է այդ թիւրիմացութեան վրայ եւ ջանում նրան գիտական տեսք տալ: Բերելով այդ տեսակէտները՝ Հ. Աճառեանը գրում է: «Ահա սրանք են նոր քննիչների կարծիքները, որոնք եթէ միասին ամփոփենք, կը ստանանք, որ Հայ գրերի ծագումը՝ ամբողջապէս կամ մասամբ՝ դրւում է անկախ կամ հին հմայական նշանադրերից եւ կամ հին պարսիկ թեւեռազրերից, հին քաղդէական» կամ նոր (սասանեան) պահավերէնից, զանդիերէնից, նոր պարսկերէնից, փինիկերէնից, պալմիրականից, արամերէնից, էսթրանդէլոյ գրից, ասորերէնից, դպտիկերէնից, եթովպերէնից: Կամ յունարէնից³⁹:

Կորիւնի բնագրի առանձին բառերի սրբագրութիւններն ու թղթի վերատեղադրումը նոր դիւրութիւն են ստեղծում հարցի յստոյ, պարզում է, որ «չեն բաւական նշանադրէն՝ ոյլ ածել զսիւղորայս զկապս հայերէն լեզուոյն», այսինքն՝ դանիէլեան նշանադրերը բաւական չեն հայերէն լեզուէ միզորաները, կապերն ամբողջութեամբ արտայալտելու համար: Այս հանդամանքը լրիւ բաւարար էր, որսկէսպի Դանիէլեան գրերը մերժուեն եւ մերժում են: Բայց կար ոչ սակաւ կարեւոր մի հանգամանք եւս, մի մեծ, անհանդուրժելի պակասութիւն: «մանաւանդ զի եւ նշանադրէրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք եւ յարուցեալ դիպեցան»: Այս նշանակում է, որ նորաստեղծ Հայոց գրերը, որ ուղղում էին հայերն ունենալ, նախ պէտք է համապատաս-դրերը,

39. ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայոց գրերը, էջ 508:

խանէին հայոց լեզուի հնչումական համակարգին, (առաջին նախապայման) եւ, ապա՝ չպէտք է լինէին ուրիշ դպրութիւններից քաղուած, (երկրորդ նախապայման): Ուրեմն հայոց այբուբեն ստեղծելիս ուրիշ դպրութիւններից գիր չքաղելը եղել է Հայոց գրերի ըստեղծման հիմնական նախապայմաններից մէկը, որով եւ առաջնորդուել են գիր ստեղծելու պրոցեսում:

Հայր է ծագում. Եթէ այդպէս է, ինչո՞ւ Դանիէլեան գրերը բերել տուեցին Հայաստան: Բանն այն է, որ Հարելը Հայոց արքային ասել էր, թի Դանիէլը, յանպատրաստուից գրել է «նշանակիրս արիաւետաց հայերէն լեզուի», Դանիէլի մոտիւը հայերէն լեզուի նշանադրեր էին: Դրա համար բերեցին Վաղարշապատ եւ փորձելով համոզուեցին, որ այդ գրերը չեն բաւարարում հայերէնի հնչիւմական համակարգին, ուրեմն հայերէն չեն: Դեռ աւելին, պարզում է միւս թերութիւնը՝ նրանց «յալլոց դպրութեանց քաղուած» լինելը: Ուրեմն հայերէն գրերն ստեղծելիս չպէտք է ուրիշ դպրութիւններից գիր վերցնել: Հայերը միշտ էլ կարող էին իրենց ցանկացած այբուբենը յարմարեցնել իրենց լեզուին, բայց որոշուած էր մուրացուած գը-ծագութեամբ գրեր չունենալ, այլ՝ սեփական:

Համոզուելով գանիէլեան գրերի կերպութեան մէջ, եւ հաւատարիմ սեփական գիր ունենալու հրամայական պահանջին, թագաւորն ու կաթողիկոսը Մեսրոպ Մաշտոցին ուղարկեցին Միջազգայի ու նա ստեղծեց հայերէն նշանագրեր: Կորիւնի միայն սոյն վկայութիւնը, (թէպէտ կան եւ այլ վկայութիւններ), ինչպէս եւ Մեսրոպաստեղծ այրութենի տառակերտման յատուկ սկզբունքը⁴⁰ բացառում է Հայոց գրերը որեւէ ժողովրդի այրութենից ու գոներից սերելու հնարաւորութիւնը եւ բացայաբում այդ տեսակիտը որդեգրող մատենագիրների եւ մանաւանդ ուսումնասիրողների դարաւոր անյաջող, անյուսալի փորձերի սնանկութիւնը: Պատահական չէ, որ հայոց գրերի ծագումնաբանութեան անյարիր այդ տեսակիտի կողմնակիցները դարերի ընթացքում միմեանց ժիմելով երբեք դրական արդիւնքի չեն հասել, եւ չեն հասնի:

Երկրորդ դրուագում, այն թերթը կամ հատուածը, որն իր պեղում խոչընդուն էր, այստեղ դառնում է Մեսրոպեան գրերի ստեղծման եւ գործադրման ճշմարիտ պատմութեան ոսկէ օղակ: Մեսրոպը ինքնաստեղծ գրերով, այրութենով, հայագիր առաջին մասունանով, նոր ուսունքի առաջին կրողների՝ գրչութեան արուեստին տիրապետող աշակերտների հետ վերադառնում է քաղաքամայր Վաղարշապատ, նրան արքայական ընդունելութիւն է ցոյց տրւում, եւ օրեր ու

40. ՄԱԹԵՒՐՈՍՅԱՆ Ա., Ա-Ք տառերի մասին, ՀԱՀ (Հարկական Սովետական Հանրագիտարան), ՀՀ. 1-12, Երևան, 1974-1986:

շաբաթներ տոնախմբութիւններ են կատարուում։ Ապա, նշանագրերը ստանալով թագաւորն ու կաթողիկոսը Մեսրոպի հետ փորձում են տեսնելու, համոզուելու, թէ նրանք բաւարար են արդեօք հայերէնի հնչիւնները արտայայտելու համար, կարո՞ղ են նրանցով աշակերտները սովորել։ Եւ Մեսրոպը թագաւորից մանուկներ խնդրելով՝ նըրան եւ կաթողիկոսին ապացուցում է, որ հայոց լեզուի լիակատար այրուքն է ստեղծել ինքը, որով երեխանները կարողանում են սովորել։ Դրանից յետոյ է, որ Վոամշապուհ թագաւորը հրամայում է ամէն տեղ նոյն նշանագրերով դպրոցներ բաց անել, իսկ Մեսրոպը երկու տարի դպրոցներ է բաց անում, աշակերտներ է դաստիարակում եւ այդ ամէնի համար ստանում է վարդապետական գեղեցիկ աստիճան, որի հետ ամենայն հաւանականութեամբ նաեւ Մաշտոց պատուանոնը, որպէս ուսուցանող Հայոց։ Եւ այնպէս է դաստիարակում իր աշակերտներին, որ նրանք այրեւ նման չեն լինում իրենց ազգակիցներին։ իմաստնանում են եւ տարածուելով տարբեր գաւառների նորաբաց հայադիր դպրոցները՝ սովորեցնում են Մեսրոպեան նշանագիրը։

Փաստօրէն այստեղ մենք վերագտնում ենք Վաղարշապատի առաջին հայագիր Մեսրոպաստեղծ դպրոցի երկու տարուայ պատմութիւնը, Մեսրոպի դպրոցական գործունէութեան յաջող ակիզբը։

Երրորդ գրուագը. «Յայնժամ վաղվագակին» հատուածը նախ ազատեց յանիրաւի զրադեցրած տեղը եւ, «հրաման առեալ ի թագաւորէն», գնաց լուսաւորուող շրջաններում իր համապատասխան տեղը՝ ճիշտ ժամանակին ու յաջորդականութեան, Մարաց աշխարհը լուսաւորելու: Բանն այն է, որ գրերի գիւտից երկու տարի անց, եւ աւելի յետոյ, Մեսրոպը նոր միայն գնում է ամենայն կողմերը լուսաւորելու, եւ սկսում է Գողթան գաւառից։ Այստեղ էլ Մաշտոցը հրաման է ստանում թագաւորից, Սիւնիք անցնելուց առաջ, մտնել կից Մարաց աշխարհը, ապա Սիւնիք, եւ յաջորդ վայրերը։

Այս բանից յետոյ կրկին երեւում է, որ լուսաւորչական այն մեծ շարժումը, որ ծաւալուել էր ողջ Հայաստանում, եռանդուն ղեկավար գործունէութիւն է ծաւալի Հայոց Վոամշապուհ թագաւորը, նա ոչ միայն նիւթական միջոցներով, այլև խորհրդակցելով Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի հետ՝ կազմել են գործողութիւնների ծրագիր դպրոցական, թարգմանական եւ ընդօրինակութեան բնագաւառների համար եւ յաջողութեամբ առաջ տարել։ Ուստի արժանի է, որ հայ ժողովրդի ճակատադրական պահը տնօրինող երեք իշխանութիւնների՝ մարմնաւոր, հոգեւոր եւ մտաւոր առաջնորդների արձանը միասին կանդնել Վաղարշապատում։

Résumé

AU SUJET DU DEPLACEMENT D'UNE FEUILLE DE MANUSCRIPT DANS L'HISTOIRE DE MESROVP MAŠTOC' DE KORIOUN VARD.

A. S. MATHEVOSSIAN

La vie de Mesrovp Maštoc' par Korioun Vardapet, auteur et écrivain du Ve siècle, a toujours été considéré comme un joyau de la littérature et de l'histoire arménienne.

L'auteur nous présente rapidement les plus anciens manuscrits ainsi que les éditions dès 1833, démontrant les efforts de chaque éditeur à nous donner un texte des plus fidèle à l'original.

Ceux qui se sont penchés sur le problème du texte original sont: Fendeklian, Abelian, Manantian, Mar, Ter Movsesian et surtout le P. N. Akinian, qui suivant sa propre logique, déplaça plusieurs passages du texte reçu.

Par ce premier article, l'auteur, tout en prenant en considération les points de vue de ses prédécesseurs, nous présente une nouvelle proposition afin de résoudre une fois pour toute le problème de fond. Il tâche de donner aussi une réponse concluante à toutes les difficultés qui s'étaient posées jusqu'à ce jour.

C'est donc avec précision et détail qu'il analyse le sens même du texte, tâchant de trouver un ordre logique des propositions et phrases, nous exposant l'endroit précis des textes douteux ou difficiles à comprendre; le tout est démontré par des preuves externes au texte, se basant sur les règles de la paléographie arménienne ainsi que sur la formation des manuscrits dont il est spécialiste.